ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 1-ին, շաբաթ.- Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ եկն ի Վիրապէն:

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա» (Սաղմ. ՃԺԷ 24) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 26):

Նույն օրը, կեսգիշերին, Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա. Ուխտի Ս. Պատարագ մատուցեց Տ. Արսեն արքեպս Բերբերյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունիսի 2-ին, կիրակի.- Բ. կիր. զկնի Հոգեգալստեան: Տօն Կաթուղիկէ Մ. Էջմիածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Հրաշափառ Աստուած եւ միշտ բարէխնամող» (Շարական) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 30):

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հայրապետական մաղթանք:

Հունիսի 9-ին, կիրակի.- Գ. կիր. զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, իր անդրանիկ Պատարագը մատուցեց Տ. Մուշեղ աբղ. Բաբայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ընտրեցէք այսօր թէ զո՛ պաշտիցէք» (Հեսու ԻԴ 15) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունիսի 16-ին, կիրակի.- Դ. կիր. զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, իր անդրանիկ Պատարագը մատուցեց Տ. Զոհրապ աբղ. Կոստանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Նախանձ տան քո կերիցէ զիս» (Հովհ. Բ 17) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունիսի 23-ին, կիրակի.- Ե. կիր. զկնի Հոգեգալստեան: Գիւր տիոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Պարթև վրդ. Գյուլումյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Թոյլ տուք երկոցունց աճել ի միասին» (Մատթ. ԺԳ 30) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 34):

Ս. Պատարագից հետո կատարվեց Հոգեհանգիստ Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ:

Հունիսի 30-ին, կիրակի.- Զ կիր. զկնի Հոգեգալստեան:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գնել աբդ. Սողոմոնյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Տիրոջ Հոգին ինձ վրա է, դրա համար իսկ օծեց ինձ, ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու» (Ղուկ. Դ 18) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվեց Հոգեհանգիստ՝ երջանկահիշատակ Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան 3-րդ տարելիցի կապակցությամբ:

Հուլիսի 7-ին, կիրակի.- ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Քրիստոս Աստուած մեր, շնորհեա՛ մեզ ընդ Պետրոսի եւ ընդ որդւոցն Զեբեդեայ արժանաւորիլ Քում աստուածային տեսլեանդ» (շարական) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հուլիսի 8-ին, երկուշաբթի.- Բ. օր Վարդավառի: Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ աբդ. Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգիստ՝ վասն համորեն ննջեցելոց:

Հուլիսի 14-ին, կիրակի.- Բ. կիր. զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 38):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հուլիսի 21-ին, կիրակի.- Գ. կիր. զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՛ մեկնեսցէ» (Մատթ. ԺԹ 6) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հուլիսի 28-ին, կիրակի.- Դ. կիր. զկնի Վարդավառի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Նա, ով ամբարիշտ է, թող ամբարշտություն անի, ով կեղտոտ է, թող կեղտոտ լինի, ով արդար է, թող արդարություն անի, և ով սուրբ է, թող սուրբ լինի: Ահա գալիս եմ շուտով և ինձ հետ են իմ վարձերը, որպեսզի հատուցեմ յուրաքանչյուրին ըստ իր գործերի» (Հայտն. ԻԲ 11-12) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգիստ՝ վասն համորեն ննջեցելոց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: